

Եթէ մի ժամանակ ոյժը, հասարակութիւններէ հոգևոր հարստութիւնը, շափուէր զէնքով, ապա այժմ իմաստուն ասացուածքը գտնուած է, որ ոյժը գիտութեան մէջ է, այս բառի ամենաընդարձակ իմաստով, այսինքն՝ մարդկութեան իդէականի մէջ:

Բայց գիտութիւնը առանց լեզուի ոչինչ է: Լեզուն մտաւորի կարևորագոյն գործօնն է:

Ինչպէս գիտութիւնն է, այնպէս էլ լեզուն է: Զարգացած լեզուն, օրինակ, զարգացած մտաւոր կուլտուրայի արտայայտիչն է:

Եւ իսկապէս:

Եթէ կարող էք երևակայել մի երկիր առանց երկաթուղիների, եթէ կարող էք երևակայել ժողովրդական տնտեսութիւն, որ ճախարակների միջոցով է առաջ տարվում, ուրեմն և հնարաւորութիւն կունենաք պատկերացնելու ձեզ այդ վայրի յետամնացութիւնը և այդ ժողովրդական տնտեսութեան նահապետականութիւնը:

Բայց եթէ նայէք արդի քաղաքակիրթ երկիրներին, այնտեղ կը տեսնէք հաղորդակցութեան կատարելագործ լած միջոցներ, որոնք մարդկանց շփուած են իրար հետ, նրանց, այսպէս ասած, դիֆֆուզիայի են ենթարկում, իսկ այդ հանգամանքը նպաստում է բարձր կուլտուրայի ազդեցութեանը ստորինի վրա: Այնտեղ կը տեսնէք մեքենաներ, որ տնտեսական կեանքի լաւ վիճակն են ցոյց տալիս:

Այդպէս է և մշակված լեզուն, գրական լեզուն:

Կուլտուրական ժողովուրդը ունի և ճոխ լեզու: Լատինական լեզուն զարգացած ժողովրդի լեզու է:

Իսկ ինչ է լեզուն առանց գրքի, ինչ են լեզուն ու գիրքն առանց գրի:

Անգիր լեզուն լեզու չէ, նա ժարգօն է: Գրական լեզուն հետևանք է գրերի, ուստի և մատենագրութեան:

Եւ այն ժողովուրդները, որոնք հինաւորաց քաղաքակիրթական հսկակ ունեն, տառերի գիւտի առաջին հեղինակներն են հաշուած:

Հնադարեան կուլտուրական ազգ են եղել փիւնիկեցիները, և տառերի գիւտը, ինչպէս պատմագիրներն են ասում, առաջին անգամ նրանց մօտ է տեղի ունեցել. այնուհետև՝ յոյների, յոյներից յետոյ հռովմայեցիների, որոնցից անցել է ժամանակակից քաղաքակիրթ ցեղերին:

Հայերն էլ հին ազգ են: Նրանք ունեն իրանց պատմականօրէն զարգացած կուլտուրան, որ 1500 տարի սրանից առաջ, յանձին իր հանճարեղ գլուխներից մէկի՝ Մեսրոպ Մաշտոցի, ստեղծել է հայ գիրը:

Այդ երևոյթը հինգերորդ դարում առաջ է բերել այն ժամանակի հարուստ ու բեղուն գրականութիւնը, գրաբարեան գրականութիւնը՝ իր մի շարք տաղանդաւոր երկերով ու նոյնքան տաղանդաւոր մատենագիրներով:

Այդ դարը յայտնի է հայոց պատմութեան մէջ Ռակէ-գար անունով:

Բայց նշանակալից է այն հանգամանքը, որ տառերի գիւտով առաջին անգամ հայ ժողովրդի մէջ ձգվում են Մեծ Քարոզչի եղբայրութեան ու հաւասարութեան գաղափարները, որոնք համապատասխանում էին ժամանակի տրամադրութեան:

«Ես եմ ճանապարհ, ճշմարտութիւն և կեանք. ով կամենում է ինձ մօտ գալ, թող ուրանայ իր անձը, վերցնի իր վրա խաչը և գայ իմ յետևից»:

«Եկայք առ իս ամենայն վաստակեալք և բեռնաւորք և ես հանգուցից զձեզ»...

Նոյն տարում առաջ է մղվում և ժամանակի ինտելիգենցիայի, որը ներկայացնողը կրօնաւորներն են եղել, իդէալը՝ նրա հարթակական առաքելութեան հարցը: Հին-

ՅՕԲԵԼԵԱՆԸ

գերորդ դարի փայլուն ու սրամիտ գրողը Եզնիկ կողբացին գտնում է, որ հասարակական գործիչը չը պէտք է տարվի մարմնական - ընչասիրական ձգտումներով, այսինքն՝ որ նա պէտք է լինի ամենից առաջ հասարակական մարդ, անհատ՝ տարված հասարակական գաղափարներով: «Ընչասիրութիւնը կուսակաշտութեան գործակցութիւն է», աստ է: «Կրացինս զկրօնաւոր մարմնասէրը խողի...» ասէ՞, որոշում է նա:

Անշուշտ, այսօր անմտութիւն է գաղափարականութիւն պահանջել արդի կրօնաւորից, որ անցրել է իր դարը և իր միասիան յանձնել է այլ մտաւոր խաւերի: Այժմ սրանցից է պահանջվում հասարակական գործը:

Ահա գրերի գիւտի նշանակութիւնը: Ահա նրա գլխաւոր արժէքը:

Տառերի գիւտից շատ ժամանակ անցած լոյս է տեսնում առաջին հայ գիրքը, որով հայ գրականութիւնն ու կուլտուրան աւելի հարստանում են:

Մինչև այսօր հին հայ միտքը, գրականութիւնը քննվել է սոսկ լեզուաբանական ու բանասիրական տեսակէտներից. այնտեղ բացակայել է հասարակական ու պատմական ուսումնասիրութիւնը: Թէ չէ մենք շատ բան կիմանայինք, կը ծանօթանայինք հայ մտքի արժէքաւոր երևոյթներին: Իսկ նրանք եղել են: Իրան ասպոցոյց՝ հայոց նոր գրականութեան հէնց առաջին շրջանը - վերածնութեան էպօխան, որը տուել է, ի թիւս այլոց, և առողջ գաղափարներ ու դրական դէմքեր:

Ներկայ հայ իրականութիւնը վերածնութեան և հին դարերի յաջորդն է: Ի՞նչ է ներկայացնում նա: Ի՞նչպէս է դիմաւորում նա այսօր երկու կուլտուրական տօները՝ տառերի գիւտի 1500-ամեակը և գրերի տպագրութեան 400-ամեակը:

Այդ իմանալու համար պէտք է դիմել հայ հասարակութեան արդի դրութեան, հասարակութեան, որ կարելի է բաժանել, գլխաւոր առմամբ, երեք խաւի՝ ունևոր, ինտելլիգենտ և ռամկավարական:

Հայ ունևորը, չը նայած նրա նացիօնալիստական յոխորտանքներին, շատ քիչ է մտածում իր ազգի ներքին գործերի մասին: Չէ որ նրանք շատ չնչին են, չէ որ նրանց օգտին տարված աշխատանքը չէ գնահատվում: Այ, այլ բան է օտար ասպարէզը, որի համար հայ ունևորը ոչինչ չի խնայի, թէև այդ խնայողութիւնը ոչ ոքին պէտք չէ, թէև ոչ ոք էլ նրանից խնայողութիւն չէ պահանջում նոյնիսկ: Բայց այդ խնայողութիւնը շոյում է հայ ունևորի փառասիրութիւնը, նրա համար «անուն» է ստեղծում: Այստեղ նա «ծափեր» է ստանում:

Իեռ Միքայէլ Նալբանդեանն է ասել այդ հայ ունևորի մասին. «Եւս իր արծաթի թումբերի տակ միշտ անխոցելի է»:

Իսկ հայ ինտելլիգենցիան:

Իա էլ ճահճացած ու այլասերման ճանապարհին կանգնած մի խաւ է: Հասարակականի կողքից նա անցնում է միանգամայն անտարբեր կերպով:

Հայ բժիշկը սոսկ բժիշկ է, հայ փաստաբանը լոկ փաստաբան է, հայ ինժեները միմիայն ինժեներ է: Իրանցից ամեն մէկը նստած իր սենեակում մտածում է լոկ իր օրվայ պարէնի, իր անձնական հաճոյքների, իր երջանկութեան մասին:

Իա բուսական կեանք վարող տարր է, տարված որկորային բնազդներով, անընդունակ որևէ հասարակական աշխատանքի:

Իսկ հայ վարժապետի մասին չենք խօսում, որովհետև նա ինքն էլ չէ խօսում առհասարակ: Մնում են մի զոյգ, մի կենտ հայ գրականագէտներ...

Ինտելլիգենցիայի ծիլը ուսանողութիւնն է: Ի՞նչ է ներկայացնում այսօր հայ ուսանողական սերունդը, որ իր շարքերում հազարներ է հաշուում:

Նա ամենից առաջ շատ անկազմակերպ է: Նոյնիսկ աւելին: Իա նոյնպէս անհասարակական տարր է: Ոչ մի լուսաւոր էջ ու յուսատու դէմք չունի նա: Հեռաւոր նմանութիւն անգամ չը կայ նրա և 60-ական ու 70-ական թւականների իդէալիստ ուսանողութեան իրջն, որի տեղը մի քանի տասնեակ է... ղել միայն:

Ահա «ժողովուրդը, այդ միակ կենդանի տարրը՝ շարունակ տարուերբվող իր շար ու

բարիով, իր խինդերով ու հեծեծանքներով,
ժողովուրդը, որ ծնողն է կուլտուրան առաջ
մղող ոյժերի:

Սակայն այդ ժողովրդի վիճակը այսօր
նախանձելի չէ:

Սաւարն ու մութն են պատել նրան—բը-
նութեան խաւարը, հասարակական մութը:
Տակաւին մտաւորապէս յետ ընկած, տակա-
ւին ցիրուցան է այդ ժողովուրդը:

Եւ թւում է, թէ մթութեան ու խաւարի
մէջ նա կը կորչի:

Բայց բանաստեղծը տեսի է. «Որքան մութ
է գիշերը, այնքան պայծառ են աստղերը»:

Ժողովրդին շրջապատող խաւարի միջից
փայլում են նրա գլխին աստղերը, և նրանց
մէջ խօսքի աստղը, որոնք լուսաւորում են
սարերի գագաթները:

Ժողովրդին պէտք է հանել դէպի այդ
սարերը, նրանց լուսաւոր կատարները:

Սօսքի, լեզուի պայծառ աստղը պէտք է
որ դուրս բերէ ժողովրդին խաւարի միջից:

Այս տօների առիթով ցանկանք, որ այդ
աստղը հանէ ժողովրդին դէպի բարձրաբերձ
լեռները, որտեղից երևում է ազատ ու լու-
սաւոր հրապարակը, դէպի որը ձգտում են
խաւարի մէջ խարխափող էակները:

Եւ այդ այդպէս կը լինի, որովհետև «որ-
քան մութ է գիշերը, այնքան պայծառ են
աստղերը»:

Այ. Մարտունի